— Երեւի, նրանք կը շարունակեն դեռեւս նստել, — հարցրի ես:

— Նրանք ամբողջ գիշեր կը լուսացնեն, — պատասխանեց Ասլանը:

ԺԹ. ՆՈԵՐ

Հետեւեալ օրը, առաւօտեան, ամէն ինչ պատրաստ էր: Մնում էր միայն փաշայի խոստացած թղթերը ստանալ եւ ճանապարհ ընկնել: Ասլանը կապկապում էր իր չեմոդանը:

— Միթէ՞ այդքան կարեւորութիւն ունեն այդ թղթերը, որ արժէր նրանց սպասել, — հարցրի ես:

— Մի առանձին կարեւորութիւն չունեն, — պատասխանեց նա, — փաշայի երկչոտ զափթիաները չեն կարող մեզ աւազակներից ազատել, բայց մի ուրիշ կողմից մենք պէտք ունենք այդ թղթերի մէջ...

Ես հասկացայ Ասլանի միտքը. ես գիշերը առաջնորդարանում արդէն ականատես էի եղած, թէ ինչ ազդեցութիւն ունեցան Արզրումի փաշայի թղթերը ամէն կասկածները փարատելու համար:

Կէսօրին մօտ էր, երբ յայտնուեցաւ փաշայի քարտուղարը: Դա միեւնոյն երիտասարդն էր, որ մեզ առաջնորդում էր քաղաքի հնութիւնները հետազօտելու: Նա բերել էր իր հետ ոչ միայն փաշայի խոստացած թղթերը, այլեւ մի թանկագին նոէր նրանից: Դա մի գեղեցիկ արաբական նժոյգ էր իր բոլոր փառաւոր ասպազէնքով. գլուխը եւ պարանոցը զարդարած էր մետաքսեայ սեւ փունջերով, որ բռնուած էին արծաթեայ, զանգակաձեւ կոճակների մէջ. թամբի ծածկոցը պատրաստած էր վագրի մորթից, որի եզերքը զարդարած էր ոսկեթել ծոպերով. երկու սեւամորթ ստրուկներ, կարմիր մահուդի զգեստներով եւ գոյնզգոյն չալմաներով, աջ եւ ձախ կողմից բռնել էին աշխոյժ նժոյգի սանձը, որը, կարծես, ինքն էլ էր զգում իր գերազանցութիւնը եւ, բակը մտնելուն պէս, սկսեց խրխնջալ եւ մի առանձին հպարտութեամբ առջեւի սմբակները դոփել գետնին:

Ասլանը, հասկանալով բանի էութիւնը, սանդուղքներից ցած իջաւ, դիմաւորեց թէ քարտուղարին եւ թէ նորին վսեմութեան ուղարկած նժոյգին: Քարտուղարը, սեղմելով Ասլանի ձեռքը, ասաց ճառական եղանակով.

— Ես ինձ շատ բախտաւոր եմ համարում, պարոն բժշկապետ, որ ինձ վիճակուեցաւ թարգման լինել իմ տիրոջ՝ նորին վսեմութեան փաշայի՝ առ ձեզ ունեցած յարգանքի եւ սիրալիր զգացմունքների: Իմ տէրը, բարեմաղթելով ձեզ բարի ճանապարհ եւ անդորրութիւն, իրան շատ երջանիկ կիամարէ,